

արդեւքն 431էն առաջ շինուածներուն համար ալ կ'արժէ: Մտեր աս խնդրոյս մէջ՝ մէկ ոտքը յունական սահմանին մէջ դրած է, մէկալ ոտքը կաթողիկէայ Հռովմական: Մէկ կողմանէ Հունաց բնորոմանը համաձայնելով Աիւրղի Աղեքսանդրացւոյ առ Ահակ եպիսկոպոս Մելիտինոյ դրած թղթին առ կտորը յառաջ կը բերէ.¹

“Սուրբ եւ տիեզերական ժողովն՝ որ յԱփեսացւոց քաղաքին ժողովեալ, նախախնամեաց կարեւորապէս ոչ զոլ պարտ եկեղեցեաց Աստուծոյ այլ արտադրութիւն հաւատոյ մուծանել ի ներքս, քան զոր էրն, զոր երեքերանեան Հալք սրբով Հոգւովն ասացեալ սահմանեցին,,. թէպէտ նոյն թղթոյն մէջ Աիւրղ քիչ մ'ետքը թէ խօսքով եւ թէ գործքով կը ցուցնէ որ աս մտօք չէ սխնհողոսական Հարց արդեւքը: Մէկալ կողմանէ ալ կաթողիկէայ սկզբան հաւանելով կը ջանայ Հայոց հանդանակին յաւելուածներն օրինաւոր ցուցնել՝ ըսելով թէ նոր վարդապետութիւն մը չեն պարունակեր: Ասիկայ՝ որչափ ալ ճշմարիտ ըլլայ քիչ կ'օգնէ Մտերին՝ իրեն բռնած գիրքին մէջ:

Արեւելից քրիստոնէական հասարակութեանց շատ մը ծուռ սկզբանց հետ կապուած է նաեւ հանդանակաց բացարձակ անհպելութիւնը՝ զորն որ կը պնդեն. թէպէտ իրենց նախնիքն են, ինչպէս ցուցուցինք, որոնք հետզհետէ իրենց ժամանակին ու տեղւոյն պիտոյից պատշաճեցուցին իրենց հանգանակը, եւ նոյն իսկ հիմակ իրենց դործածածը աս կերպ հանգանակ մըն է:

Աս ծուռ ըմբռնումը բարեբախտութեամբ ամէն արեւելեան քրիստոնէայ հասարակութեանց հաւատար չէ: Չէ թէ մինակ հիմայ, հապա ի սկզբանէ իսկ երբեք այսչափ խիստ եղած չեն Հալք՝ նաեւ Հռովմական կաթողիկէ եկեղեցւոյ հաղորդութենէն դուրս:

ԾԱՆ. Հոս կը սխալ շեղմանը յօսիլ նոյն (1870ի) ժամանակուան Համաժողովոյն անան անուանելոց խնդիրներուն վրայ զոր պատշաճ համարեցանք որոշութեամբ վստահ ըլլալ որ նաեւ վերջը գրած մէկ գործքին մէջ նոյնը շատ քիչ եւ գրեթէ ոչինչ փոփոխութեամբ դրած է: Տես Խրատախոնի կնոճիք, տպ. Վիենն. 1873 էջ 157-162:

¹ Աիւրղի Պարագր. էջ 429: